ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"17" հունվարի 2011թ. № 2 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ /ԿՑԱԳՐՄԱՆ/ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության 1998թ. սեպտեմբերի 16-ի ՀՕ-250 օրենքի 5-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.21, 1.24 կետերի դրույթներով և համաձայն զինվորական հաշվառման հանձնաժողովների կազմերի վերաբերյալ տարածքային զինվորական կոմիսարների կողմից ներկայացված առաջարկությունների, Սյունիքի մարզում 1995թ. ծնված պատանիների զինվորական հաշվառումը /կցագրումը/ սահմանված կարգով կազմակերպելու նպատակով ո ր ո շ ու մ եմ՝

1. Հաստատել տարածքային զինվորական կոմիսարիատներում ստեղծված նախազորակոչիկների զինվորական հաշվառման /կցագրման/ հանձնաժողովների անհատական կազմերը՝ համաձայն հավելվածի:
2. Զինվորական հաշվառման /կցագրման/ հանձնաժողովներին. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել կցագրման աշխատանքների իրականացումը:
3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը. ապահովել մարզային առողջապահական ընկերությունների կողմից սույն որոշումից բխող անհրաժեշտ միջոցառումների իրականացումը:
4. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը. ապահովել մարզային ենթակայության կրթական հաստատություններում սովորող, 1995թ. ծնված պատանիների ներկայացումը համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատներ:
5. ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչությանը. անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել հանձնաժողովներին:
6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2011թ. հունվարի 17
ք. Կապան